[1] Դուրս գրման ամսաթիվ		
6	Օգոստոս	2019 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
6	Օգոստոս	2019 թ.

Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	8920842036

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	
[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	6	9	0	2	0	8	7		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	6	9	0	2	0	8	7	/	1

[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[14] Լրացուցիչ տվյալներ		

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի								
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								

[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[20] Լրացուցիչ տվյալներ		

[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը			
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապ. հարկ	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 22100419 բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող՝
(անունը, ազգանունը)

06/08/2019 14:16:47

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

10 հունիսի 2019թ.

ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Ա.Գյոզալյանս, վերանայելով վարույթիս թիվ 22100419 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

2019 թվականի ապրիլի 23-ին, ժամը 17:00-ի սահմաններում, Շիրակի մարզի Ամասիա գյուղի բնակիչ Հայկ Մարսելի Կարապետյանը, նույն գյուղի բնակչուհի Նաիրա Սամվելի Հակոբյանին առևանգելու դիտավորությամբ, վերջինիս աշխատավայրում՝ Շիրակի մարզի մարզպետարանի սոցիալական աջակցության Ամասիայի տարածքային գործակալության շենքում, բռնություն գործադրելով՝ ձեռքերից քաշելով և իր հետ չգնալու դեպքում բռնություն գործադրելու՝ բռնաբարելու սպառնալիքներ տալով, Նաիրա Սամվելի Հակոբյանի կամքին հակառակ նրան դուրս է հանել շենքից, նստեցրել «Մերսեդես» մակնիշի 03LO001 հաշվառման համարանիշի ավտոմեքենան և բացահայտ առևանգել՝ վերջինիս տեղափոխելով Ամասիա գյուղին հարակից «Սնդ» կոչվող տեղանք:

Դեպքի առթիվ, 25.04.2019 թվականին, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 22100419 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նաիրա Սամվելի Հակոբյանը ճանաչվել է տուժող: Վերջինս 25.04.2019 թվականին ներկայացված հաղորդմանը նույնաբովանդակ ցուցմունք է տվել այն մասին, որ բնակվել է մոր՝ Գոհարիկ Սանասարի Հովհաննիսյանի հետ միասին: Ամասիա գյուղի բնակիչ Հայկ Մարսելի Կարապետյանին նախկինում ճանաչել է որպես համագյուղացի: Մինչ 2017 թվականի դեկտեմբեր ամիսն աշխատել է Ամասիա գյուղի համայնքապետարանում որպես առաջատար մասնագետ և անձամբ ծանոթ է Հայկ Կարապետյանի մոր, համայնքապետ՝ Ջեմա Հարությունյանի հետ: 2017 թվականին ամուսնացել է, որից հետո այլ երկիր բնակութայն տեղափոխվելու պատճառով աշխատանքից հեռացել է: Սակայն հետագայում, ամուսնալուծությունից հետո վերադարձել է գյուղ և աշխատանքի է ընդունվել Շիրակի մարզի սոցիալական աջակցության Ամասիայի տարածքային գործակալությունում որպես 1-ին կարգի մասնագետ: Նախկինում Հայկ Կարապետյանի հետ որևէ տեսակի շփում չի ունեցել, նույնիսկ չի բարևել: Վերջինս գյուղում բնութագրվել է որպես բացասական անձնավորություն, ինքը փորձել է նանից հեռու մնալ: 2018 թվականի սեպտեմբեր ամսին, կոնկրետ օրը չի հիշել, երեկոյան ժամը 18:00-ի սահմաններում, գյողի կենտրոնական հատվածում, Հայկ Կարապետյանը մոտեցել է իրեն ու ասել, որ լուրջ խոսելու բան ունի: Ինքը նրան ասել է, որ խոսելու բան չունի նրա հետ ու հեռացել է: Կարել է, որ վերջինս, տեղյակ լինելով, որ ինքն ամուսնալուծվածէ, ուղղակի փորձել է իր հետ որոշակի հարաբերություն ստեղծել: Հ.Կարապետյանը դրանից հետո իրեն չի անհանգստացրել: Ինքը հանդիսանում է «Հյուսիսի երիտասարդներ» ՀԿ-ի անդամ և 2019 թվականի ապրիլի 12-ին «Վորլդ Վիժիոն» կազմակերպության աշխատակիցների հետ միասին մեկնել են դասընթացների: Մեկնելիս, երբ գտնվել է Ամասիա գյուղի հրապարակում, տեսել է Հայկ Կարապետյանին պատկանող միկրոավտոբուսը՝ մոտակայքում ու ենթադրել է, որ վերջինս է եղել այդ մեքենայի ղեկին: 2019 թվականի ապրիլի 15-ին, ժամը 09:15-ի սահմաններում, երբ ոտքով գնացել է աշխատանքի, հեռվից նկատել է Հ.Կարապետյանին, իսկ երբ հասել է ճանապարհին առկա խանութի հետնամաս, Հ.Կարապետյանը կտրել է ճանապարհն ու հարցրել, թե ինքն ուր էր գնում, ում հետ էր գնում, որ ավելի լավ է ճիշտն իրենից իմանա, քան ուրիշից: Ինքը հանդիմանել է, ասել, թե ինչու պետք է նրան որևէ բան ասի, մնացել էր, որ իր անունը նրա հետ կապեին, որ վերջինս իրենից հեռու մնա: Հ.Կարապետյանն ասել է, որ իր վերաբերյալ ամեն ինչ նա պետք է իմանա, որ ինքը նրան հետաքրքրում է: Այդ ընթացքում Հ.Կարապետյանն իրեն չի հրել, չի քաշքշել, որևէ բռնություն չի գործադրել, մարմնական վնասվածք չի պատճառել: Ինքը նրան հրել անցել է ու գնացել աշխատանքի:

հակառակ դեպքում նրա արարքի մասին կտեղեկացնի նրա ծնողներին ու կդիմի ոստիկանություն: Նույնիսկ նրան ասել է, թե չի ամաչում կատարածից, քանի որ երեխա ունի: Վերջինս իրեն գրել է, որ ինքն ում ցանկանա կարող է ասել, միևնույնն է հետ չի կանգնելու մտադրությունից, որ իրենք միասին պետք է ապրեն: Մինչև 21.04.2019 թվականը Հ.Կարապետյանն իրեն նշված կայքով գրել է, անընդհատ նույն մտքերն է արտահայտել, ինքն էլ փորձել է նրան հասկացնել, որ հեռու մնա իրենից: Վերջինս իր կողմից գրված վիրավորական արտահայտություններից չի ազդվել: 2019 թվականի փետրվարի 20-ին և 21-ին գտնվել է Գյումրի քաղաքում՝ հարազատ քրոջ տանը: Այդ ընթացքում, իր կարծիքով, Հ.Կարապետյանը կարծել է, որ նրանից խուսափելու համար է գյուղից մեկնել, նույն ինտերնետային կայքով գրել է, որ ոչ ոք չի կարող իրեն նրանից հեռու տանել, գետնի տակից էլ լինի՝ գտնելու է: Ինքը մեկից երկու անգամ փորձել է բացատրել, որ նա իր համար այն արժեքը չունի, որ նրանից փախնի, ասել է, որ Գյումրիում է՝ հարազատների տանը, որպեսզի չկարծի, որ նրա մասին է մտածել կամ նրա պատճառով է գյուղից հեռացել: Տեսնելով, որ վերջինս ընդունակ չէ ընկալել իր ասածները, այլևս նրան չի գրել: 21.04.2019 թվականին վերադարձել է գյուղ Ամասիա, իսկ հաջորդ օրը՝ 22.04.2019 թվականին, ժամը 09:10-ի սահմաններում, աշխատանքի գնալիս, կրկին վերը նշված խանութի մոտ, սակայն այս անգամ փողոցի կողմով քայլել է: Ի դիմաց ելել է Հայկ Կարապետյանը և, որպեսզի ինքը չկարողանա փողոցն անցնել, բռնել է իր թևերից: Փորձել է նրանից ազատվել, սակայն վերջինս երկու թևերից ամուր բռնել է: Վերջինս հարցրել է, թե ինչու ինքը նրա ասածները լուրջ չի ընդունել, ցանկանում է իր հետ ապրել: Ինքը պատասխանել է, որ նրան ասել ու փորձել է մարդավարի բացատրել, սակայն նա չի հասկացել: Ասել է, որ կսկսի հարվածել նրան, եթե շարունակի իրեն բռնած պահել: Դրանից հետո Հ.Կարապետյանը վերցրել է իր պայուսակը՝ մյուս ձեռքով շարունակելով իրեն բռնած պահել: Ինքը ցանկացել է պայուսակը վերցնել, սակայն չի կարողացել: վերջինս ստուգել է պայուսակի ու դրամապանակի պարունակությունը: Ինքը նունիսկ ասել է, թե ամոթ չի արել, որ պայուսակն է մտել, սակայն վերջինս ասել է, որ իր ամեն ինչը հետաքրքրում է նրան: Ինքն ասել է, որ կատարվածի մասին կպատմի նրա մորը, սակայն վերջինս ասել է, որ ավելի վատ իր համար, կգնա իր աշխատանքի վայր ու իրեն քաշելով կտանի: Դրնից հետո ինքը նրան հրել է, հարվածել: Հարվածելու ընթացքում իր աջ դաստակի վրա առաջացել է քերծվածք, իսկ վերջինիս կողմից իրեն բռնած պահելու և քաշելու հետևանքով աջ թևին՝ ուսից ներքև հատվածում առաջացել է կապտուկ: Հայկն իրեն խնդրել է, որ նրան մեկ օր տրամադրի, որպեսզի իր հետ կարողանա խոսել, եթե վատ մտքեր ունենար իր վերաբերյալ, ապա կոլորեր իր թևերը, կմտցներ ավտոմեքենան ու կտաներ: Ինքը հասկացել է, որ Հայկ Կարապետյանից պրծում չկա, վերջինիս ստել է ու ասել, որ երկու օրից կհանդիպեն: Նույն օրը, երեկոյան, կատարվածի մաին պատմել է իր մորը և որոշել են, որ այդ հարցով ինքն անձամբ զրուցի Հ.Կարապետյանի մոր՝ Ջ.Հարությունյանի հետ: Հաջորդ օրը՝ 23.04.2019 թվականին, ժամը 11-ի սահմաններում, գնացել է Ջ.Հարությունյանի մոտ՝ համայնքապետարան: Երբ մտել է նրա աշխատասենյակ, Ջ.Հարությունյանն անմիջապես ասել է, թե. «Արի տեսնեմ ինչ անշնորհքություններ է թույլ տվել»: Ինքը հասկացել է, որ վերջինս տեղյակ է կատարվածից, սակայն, թե որտեղից է տեղեկացել՝ չի կարող ասել: Նրան ասել է, որ եթե ինքն ամուսնալուծված է, դա որևէ առիթ չի տալիս նրա որդուն իրեն անհանգստացնելու համար: Նրան ասել է, որ որդին որևէ ձևով չի կարող հասկանալ, որ պետք է հեռու մնա իրենից: Ջ.Հարությունյանն ասել է, որ իր որդու աչքին չընկնի, մինչև հարցը կլուծեն: Ջ.Հարությունյանի մոտից գնացել է աշխատանքի: Նույն օրը, ժամը 17:00-ի սահմաններում, իր աշխատասենյակում են գտնվել ինքը և իր աշխատանքային ընկերները: Աշխատասենյակի դուռը թակել են, որից հետո կիսով չափ երևացել է Հայկ Կարապետյանը, ով խնդրել է իրեն: Ինքը ռեֆլեքսորեն աշխատասենյակից դուրս է եկել, քանի որ վերջինիս պահվածքում ագրեսիվություն ու զայրույթ է տեսել: Վախեցել է, որ կարող է վատ բան լինի և բացի այդ վախեցել ու ամաչել է, որ հանկարծ Հայկ Կարապետյան արարքներն այլ մարդիկ չիմանան, չխայտառակվի: Դուրս է եկել միջանցք, որտեղ հարցրել է Հ.Կարապետյանին, թե ինչ է անում իրենց աշխատավայրում: Վերջինս ասել է, որ իրեն զգուշացրել էր կատարվածի մասին որևէ մեկին չասելու վերաբերյալ: Ասել է, որ իր հետ խոսելու բան ունի ու բռնելով իր թևից քաշել է դեպքի ելքի դուռը: Ինքը բարձր ձայներ չի հանել, օգնություն չի կանչել, որպեսզի Հայկի պատճառով չխայտառակվի: Շենքից դուրս գալուց հետո Հ.Կարապետյանը բացել է նրա վարած ավտոմեքենայի հետևի աջ դուռը և իրեն ասել, որ եթե նրան չլսի ու մեքենան չնստի, որտեղ իրեն տեսնի բոլորի աչքի առաջ շորերը կհանի և իր հետ սեռական

ուղղությամբ, պնդրել, որ իրեն բաց թողնի, որ նա, կատարած արարքով, իրեն է խայտառակում: Ինքը, վախեցել է նրա սպառնալիքներից, կանկրետ նրանից, որ ֆիզիկական ուժի գործադրմամբ ոչ միայն հագուստները կպատառոտեր, այլ նաև կսկսեր սպառնալիքներն իրագործելուն ուղղված գործողություններ կատարել: Ինքը վախեցած նստել է ավտոմեքենան, իսկ Հ.Կարապետյանը շրջվել է մեքենայի հետնամասով ու նստել է մեքենայի ղեկին: Նշել է, որ այդ պահին շատ վախեցած է եղել, երբ իրեն նստեցրել է ավտոմեքենան, տեսել է փականքների դիրքը ներքև վիճակում և դռները բացել հնարավոր չի եղել: Վախեցած ու շփոթված է եղել, իսկ փականքների դիրքը տեսնելուց հետո չի փորձել դուռը ներսից բացել: Վերջինս սկսել է մեքենան վարել, ինքը հասկացել է, որ այն վարել է դեպի «Սնդ» կոչվող տեղանքի ուղղությամբ: Մինչ Հ.Կարապետյանի մեքենայի ղեկին նստելն, ինքը զանգել է նրա մոր վարորդին՝ Գոռ Զաքարյանին, ով միաժամանակ հանդիսանում է Հ.Կարապետյանի կնոջ հորաքրոջ որդին: Վերջինիս ասել է, որ Ջեմա Հարությունյանին փոխանցի, որ Հայկն իրեն տարավ: Այդ ամենը տեսել է նաև Հ.Կարապետյանը և դրան որևէ արգելք չի հանդիսացել: Վերջինս ասել, որ կարող է զանգել ում որ ցանկանա, միևնույն է ոչ ոք ոչինչ չի կարող անել, որ իր համար ոչ ոք չի անհանգստանա, այլ ով էլ որ գա, ապա նրա համար է անհանգստանալու, որպեսզի ինքը չբողոքի ու նրան չդատեն: Այդ ընթացքում իրեն է զանգել իր աշխատանքային ընկեր Գայանե Ավետիսյանը և իրեն հարցրել, թե ում զանգի, ինչ անի: Ինքն ասել է, որ Ջ.Հարությունյանին արդեն ասել է, որ Հայկն իրեն տանում է «Սնդ» կոչվող տեղանքի ճանապարհով: Գայանե Ավետիսյանի հետ խոսակցության մանրամասներ չի հիշել՝ հուզված լինելու, լացելու պատճառով: Քանի որ Գ.Ավետիսյանը մի քանի անգամ զանգել է իրեն, Հ.Կարապետյանը ձեռքը երկարացրել ու վերցրել է իր հեռախոսը, դրել ճանապարհին մոտ քարի վրա և շարունակել է վարել մեքենան մինչև հասել են ճանապարհի վերջը: Նա ասել է, որ ոչ մեկն իր համար չի անհանգստանա, որ սպասի ու տեսնի, թե 15 րոպե հետո ինչ է կատարվելու, կհամոզվի, որ ինքը ճիշտ է: Ասել է, որ լուրջ է տրամադրված իր հանդեպ, իր համար ամեն ինչ կանի, իր ունեցածը կկրկնապատկի, կապացուցի, որ բոլորն էլ իրեն ստում են, իր շրջապատի մարդիկ կեղծ են ու ինքը պետք է նրան հավատա: Ինքը նրան ասել է, որ իր կամքը հաշվի չի առել, եթե նույնիսկ նա ճիշտ է ու լուրջ նպատակներ ունի, նրա հետ որևէ հարաբերություն կառուցել չի ցանկացել, նա ամուսնացած է ու երեք երեխաներ ունի: Հ.Կարապետյանն ասել է, որ ամուսնալուծվելու է, կինը տեղյակ է այդ մասին, ունեցվածքը թողնելու է կնոջն ու երեխաներին և իր հետ նոր կյանք է սկսելու: Խոսակցության հիմնական թեման եղել է վերը նշվածը, իսկ շուրջ 15 րոպե անց այնտեղ են եկել Հ.Կարապետյանի հորեղբայրը՝ Ֆելիքս Կարապետյանը և Գոռ Զաքարյանը: Հայկ Կարապետյանը, երբ տեսել է վերջինների գալը, իրեն սպառնացել է, որ եթե նրանց կամ այլ մարդու հետ ինքը վերադառնա գյուղ, ապա այլևս իր հետ հարգալից չի լինի և կոշիմի քայլերի, որոնք նա էլ չի ցանկանում իրագործել: Ֆ.Կարապետյանը սկսել է Հ.Կարապետյանին նախատել, ասելով, թե ինչ փորձանք է սարքել, ինչ թատրոն է: Հ.Կարապետյանն ասել է, որ նրանք են թատրոն սարքել, որ նա իր հետ խոսելու բան ունի, որ ինքը չափահաս մարդ է: Հորեղբայրն ավելի է բորբոքվել, սկսել է վիրավորել Հ.Կարապետյանին, հիշեցրել, որ վերջինս երեխաներ ունի: Հ.Կարապետյանը համոզել է Ֆ.Կարապետյանին և վերջինս Գոռ Զաքարյանի հետ նստել են նրանց ավտոմեքենան, իսկ ինքն ու Հ.Կարապետյանը նստել են վերջինիս ավտոմեքենան: Հ.Կարապետյանն առաջարկել է իջնել ավտոմեքենայից, որպեսզի Ֆելիքս Կարապետյանը և Գոռ Զաքարյանն ավելորդություններ չկարծեն: Իջել են ավտոմեքենայից, ոտքով քայլելով հեռացել են շուրջ 20 մետր: Հայկն իրեն ասել է, որ ինքն արդյոք համոզվել է, որ ով էլ գա , անհանգստանա, որ ինքը բոլորին ասելու է, որ ցանկանում է ամուսնանալ իր հետ: Այդ ընթացքում եկել են նաև իր աշխատակիցներից Գայանե Ավետիսյանը և Նաիրա Մանուկյանը, ինչ որ մեկի ավտոմեքենայով: Գայանե Ավետիսյանը հայկին ասել է, որ եթե Հայկ Կարապետյանը հարգում է հորեղբորը, ապա թույլ տա իրեն նրանց հետ վերադառնալ: Հայկը բորբոքվել է, հարցրել թե նրանք իր ինչն են և ասել, որ ոչ մեկին էլ չի հարգում: Ինքը հասկացել է, որ Հայկը բորբոքված է, մոտեցել է Գայանեին, ասել, որ Հայկն իրեն կտանի գյուղ: Քայլերն ուղղել է դեպի Հայկի ավտոմեքենան: Հայկը դրանից լավ է զգացել, ասել, որ ինքը նրա խոսքը գետնով չի տվել, նա իր խոսքի տերը կլինի ու իրեն կտանի տուն: Նշել է, որ երբ որոշել է Հայկի ավտոմեքենայով վերադառնալ գյուղ, Ֆելիքս Կարապետյանը փորձել է տպավորություն ստեղծել, որ իբր ինքն է Հայկ Կարապետյանի հետ գնացել նշված վայրը և քանդում է վերջինիս ընտանիքը, փոխարենը Ֆելիքս Կարապետյանը կարող էր միջամտել ու եղբոր երեխային քաշելով կամ սաստելով տաներ այդտեղից: Մասնավորապես Ֆելիքս

վերադարձել են գյուղ Ամասիա, ճանապարհին մյուս ավտոմեքենաներն իրենց հետևից եկել են, իսկ արդեն Ամասիայում մյուսներին չի տեսել: Ճանապարհին Հայկն ասել է, որ իրենք անպայման պետք է խոսեն և ինքը, չհակադրվելու համար, համաձայնվել է: Գնացել են Գայանե Ավետիսյանի տան մոտ, որպեսզի վերջինից վերցներ իր պայուսակը, որում եղել են տան բանալիները, որից հետո գնացել են իրենց շենքի մոտ ու ինքը գնացել է տուն: Տանը, կատարվածի մասին հայտնել է մորը՝ Գոհար Հովհաննիսյանին և վերջինս, ժամը 19:00-ի սահմաններում զանգել է Հայկի մորը, բողոքել կատարվածից, ասել, որ նրանց հարգելով չեն դիմել ոստիկանություն: Հայկի մայրն ասել է, որ թող ինքը չնստեր որդու հետ, հետո ասել էր, որ կզանգի իր աշխատավայրի ղեկավարությանը, որպեսզի ինքը երկու օր գործի չգնա, մինչև նրանց երեխային կարգի հրավիրեն: Այդ օրը և հաջորդ օրը գտնվել է տանը, կատարվածից վատ է զգացել, թուլացած է եղել և տանից դուրս չի եկել: 25.04.2019 թվականին, ժամը 07-ի սահմաններում, մայրն իրեն արթնացրել է, ասել, որ Հայկը մեքենայով պտտվել է իրենց շենքի դիմաց: Բացի այդ արդեն գյուղում խոսակցություններ են պտտվել, որ իբր ինքն իր կամքով է նստել Հայկի մեքենան ու գնացել նրա հետ: Ի վերջո մայրը կրկին զանգել է Հայկի մորը՝ Ջեմմա Հարությունյանին, ասել որդու վարքագծի մասին, որ տղան իրենց շենքի դիմաց է, որ գան վերջինիս տանեն: Ջեմման ասել է, որ իրենք իրենց որդու վրա չեն կարող և իրենք կարող են դիմել ոստիկանություն: Ինքն այդպես էլ արել է:

Նախաքննության ընթացքում ոստիկանության Ամասիայի բաժնի աշխատակցի միջոցով Հայկ Մարսելի Կարապետյանին որպես կասկածյալ հարցաքննելու նպատակով ծանուցագիր է ուղարկվել, սակայն պարզվել է, որ վերջինիս փաստացի բնակության՝ Շիրակի մարզի Ամասիա գյուղի 18 փողոց 22 տան դուռը փակ է եղել: Ոստիկանության աշխատակիցը զանգել է Հայկ Մարսելի Կարապետյանի բջջային հեռախոսահամարով, վերջինս հայտնել է, որ գտնվել է Երևան քաղաքում և 16:00-ին ՇՄ քննչական վարչություն ներկայանալ չի կարող: Հ.Կարապետյանին հայտնվել է, որ նշված ժամկետին չներկայանալուն խոչընդոտող հանգամանքների մասին կարող է նախապես տեղյակ պահել նախաքննական մարմնին՝ զանգելով 041-10-66-91 հեռախոսահամարին, որին ի պատասխան վերջինս հայտնել է, որ չի պատրաստվում նշված հեռախոսահամարով որևէ մեկին զանգել, չի կարող ասել, թե Երևան քաղաքից երբ կվերադառնա, ուստի չի կարող ասել, թե երբ կարող է ներկայանալ Շիրակի մարզային քննչական վարչություն:

Նույն օրը որոշում է կայացվել նրան բերման ենթարկելու մասին, որի կատարումը հանձնարարվել է հետաքննության մարմնին: Հետաքննության մարմնից ստացված տեղեկության համաձայն վերջինս բացակայել է բնակության հասցեից, ուստի հնարավոր չի եղել նրան բերման ենթարկել:

27.04.2019թ. տուժող Ն.Հակոբյանի ոստիկանության Ամասիայի բաժնում դիմում է ներկայացրել, որով հայտնել է, որ չի ցանկանում, որպեսզի Հայկ Մարսելի Կարապետյանն իրեն առևանգելու համար ենթարկվի քրեական պատասխանատվության:

29.04.2019 թվականին տուժող Ն.Հակոբյանը նախաքննական մարմնին դիմում է ներկայացրել, որով հերքել է իր ցուցմունքով նշված էական հանգամանքները և հայտնել, որ Հայկ Մարսելի Կարապետյանից բողոք պահանջ չունի, չի ցանկացել, որ նա ենթարկվի քրեական պատասխանատվության:

Ն.Հակոբյանը հիշյալ դիմումի շուրջ լրացուցիչ հարցաքննվել է և հայտնել, որ իրականում իրեն Հ.Կարապետյանը չի առևանգել:

Հայկ Մարսելի Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում է կայացվել և նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2019 թվականի ապրիլի 22-ին, ժամը 09:10-ի սահմաններում, Ամասիա գյուղում, հանդիպելով նույն գյուղի բնակչուհի, ուսքով աշխատավայր մեկնող Նաիրա Սամվելի Հակոբյանին, և իր հետ շփվելու առաջարկները վերջինիս կողմից լուրջ չընդունելու հարցի շուրջ վիճաբանել է նրա հետ, որի ընթացքում այլ բռնի գործողություններ է կատարել Ն.Հակոբյանի նկատմամբ՝ երկու ձեռքով դիտավորությամբ բռնել է նրա թևերից, քաշքշել՝ Ն.Հակոբյանի առողջությանը պատճառելով աջ բազկի շրջանի արյունազեղման ձևով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք:

Բացի այդ, 2019 թվականի ապրիլի 23-ին, ժամը 17:00-ի սահմաններում, Նաիրա Սամվելի Հակոբյանին առևանգելու դիտավորությամբ, վերջինիս աշխատավայրում՝ Շիրակի մարզի

հանել շենքից և իր հետ չգնալու դեպքում բռնություն գործադրելու՝ բոլորի աչքի առաջ հագուստները հանելու և բռնաբարելու սպառնալիքներ տալով նստեցրել իր վարած «Մերսեդես» մակնիշի 03LO001 հաշվառման համարանիշի ավտոմեքենան և բացահայտ առևանգելով վերջինիս տեղափոխել է Ամասիա գյուղին հարակից «Սնդ» կոչվող տեղանք:

Քրեական գործով նախաքննության ընթացքում «Արթմեդ» բժշկական-վերականգնողական կենտրոն ՓԲԸ-ից ստացվել է տեղեկություն այն մասին, որ Հայկ Սամվելի Կարապետյանը 10.05.2019 թվականին ընդունվել է «Արթմեդ» բժշկական-վերականգնողական կենտրոնի «Սթրես կենտրոն»՝ ստացիոնար բուժման, սակայն 15.05.2019թ.-ին ինքնակամ հեռացել է բաժանմունքից՝ բուժումը կիսատ թողնելով, որի պատճառով ախտորոշումը մնացել է չճշտված, իսկ նախնական ախտորոշվել է՝ պարանոիդ համախտանիշ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ, 248-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Տ Ի

1. 22100419 քրեական գործով նշանակել ամբողջատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝

ա/ Հայկ Մարսելի Կարապետյանը նախկինում, իրեն մեղսագրվող արարքը կատարելիս և ներկայումս որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել, տառապում է, թե՝ ոչ, եթե այո՝ ինչպիսի և երբվանից: Իրեն մեղսագրվող հանցանքը կատարելու պահին վերջինս գտնվել է արդյոք հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման մեջ, թե՝ ոչ:

բ/ եթե Հ.Մ.Կարապետյանը տառապել կամ տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ կամ գտնվել է հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման մեջ, ապա նշված հիվանդությունը կամ խանգարումը, իրեն մեղսագրվող արարքը կատարելիս, զրկել է արդյոք նրան իր գործողությունների հանրորեն վտանգավորությունը գիտակցելու, իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ունակությունից: Հ.Մ.Կարապետյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

գ/ Հ.Մ.Կարապետյանի կողմից հոգեկան հիվանդությամբ տառապելու կամ հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման մեջ գտվելու դեպքում կարող է արդյոք դա պատճառ հանդիսանալ իրեն մեղսագրվող արարքը կատարելու համար:

դ/ Հ.Մ.Կարապետյանը ունակ է իրադրությունները ճիշտ ընկալել և այն վերարտադրել՝ ցուցմունքներ տալու, պատմելու կամ այլ եղանակով, մասնակցել քննչական և դատաքննչական գործողություններին:

ե/ Հ.Մ.Կարապետյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե՝ ոչ, եթե՝ այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում, հանրության համար վտանգ ներկայացնում է, թե՝ ոչ և հակացուցված չէ արդյոք բուժումը:

3.Փորձագետներին խնդրվում է պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովության համար:

4. Փորձագետներին, այդպիսի պահանջ լինելու դեպքում, տրամադրել քրեական գործի նյութերը, իսկ վերջիններիս պահանջով, նախանշված օրը, փորձաքննության կատարման վայր կներկայացվի փորձաքննվող Հայկ Մարսելի Կարապետյանը: